ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 1167-Ն հրամանով հաստատված N 1 հավելվածի 1-ին կետի 14-րդ ենթակետով նախատեսված չափորոշիչ)

2015 թվականի ընթացքում մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման վերաբերյալ

Գնահատման չափորոշիչներ	Կատարված աշխատանքները՝ ըստ ենթաչափորոշիչների
1. Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպումը և իրականացումը	1) ա. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերի առկայությունը. - ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից հաստատվել է <<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագիրը: - Մարզի 7 (Եղեգնաձոր, Ագարակաձոր, Ելփին, Թառաթումբ, Խաչիկ, Մալիշկա, Շատին) համայնքներ մշակել են արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրեր: - ,,ՕՔՍՖԱՄ,, ՄԲ-ի հետ համատեղ մշակվել է 8 համայնքներում (Ագարակաձոր, Արենի, Արտաբույնք, Արփի, Ելփին, Խաչիկ, Հորբատեղ, Չիվա) աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված փոքրածավալ շինարարական աշխատանքների ծրագրեր: - Արենի–Խաչիկ ճանապարհի քարաթափման վտանգի տակ գտնվող հատվածի վերանորոգման վերաբերյալ մարզպետարանի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված առաջարկությունն ընդունվել է, վերանորոգման համար անհրաժեշտ գումարը հաստատվել է. շինարարական աշխատանքները կիրականացվեն 2016 թվականին:

	1)բ. մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումը . -<<Վայոց Ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի անտառների հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ծրագրով նախատեսված աշխատանքները հիմնականում կատարվել են, -Համայնքների կողմից մշակված ծրագրերից կատարվել են. *Մալիշկայի գյուղական համայնքում՝ սելավատարի մաքրում և ափերի ամրացում, *Շատինի գյուղական համայնքում՝ Եղեգիս գետի ափերի ամարացում, *Եղեգնաձորի քաղաքային համայնքում՝ Սրկողունք գետի հունի մաքրում, *Ելփինի գյուղական համայնքում՝ սելավատարի մաքրում և խրամուղղու կառուցում, *Թառաթումբի գյուղական համայնքում՝ Խմելու ջրագծի վերանորոգում -800մ: -Խաչիկի գյուղական համայնքում ցամաքուրդային համակարգի կառուցման փոխարեն գումարը ուղղվել է ,,ՕՔՍՖԱՄ,, ՄԲ-ի կողմից հրշեջ հենակետի կառուցման համաֆինանսավորմանը, -Ագարակաձորի գյուղական համայնքում խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի վերանորոգման համար նախատեսված գումարը ուղղվել է ,,ՕՔՍՖԱՄ,, ՄԲ-ի կողմից խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման համաֆինանսավորմանը: -Գլաձորի գյուղական համայնքում ԻՖԱԴ-ի ծրագրով իրականացվել են շուրջ 378 մլն դրամի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքներ: -,,ՕՔՍՖԱՄ,, ՄԲ-ի հետ մշակված ծրագրերի հիման վրա 8 համայնքներում կատարվել են աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված հետևյալ փոքրածավալ

	շինարարական աշխատանքները. *Ելփինի գյուղական համայնքում՝ վերանորոգվել է խմելու ջրի արտաքին ցանցի 1200մ հատվածը, *Չիվայի գյուղական համայնքում՝ կառուցվել է ջրահեռացման համակարգ 200մ, *Արենիի գյուղական համայնքում՝ Դպրոցի մուտքի վրա կառուցվել է կախովի ծածկ, *Խաչիկի գյուղական համայնքում՝ կառուցվել է հրշեջ հենակետ, *Արփիի գյուղական համայնքում՝ Արփա գետի վրա կառուցված կամրջի վրա տեղադրվել են մետաղական բազրիքներ, *Արտաբույնքի գյուղական համայնքում՝ վերանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցի 1100մ հատվածը, *Հորբատեղի գյուղական համայնքում՝ վերանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցի 900մ հատվածը, *Ագարակաձորի գյուղական համայնքում՝ վերանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցի 1100մ հատվածը: -Արենի-Խաչիկ ճանապարհի քարաթափման վտանգի տակ գտնվող հատվածի վերանորոգման աշխատանքները կիրականացվեն 2016 թվականին: 1)գ. քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների ստեղծումը և ծառայությունների գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը. Մինչև 2015թ նոյեմբեր ամիսը գործել են քաղաքացիական

	պաշտպանության 8 մարզային ծառայություններ՝ իրենց գործունեության համար անհրաժեշտ փաստաթղթերով: ՀՀ էկոնոմիկայի նախարարության առաջարկով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2015 թվականի նոյեմբերի 24-ի N 100 որոշմամբ ՔՊ առևտրի, սննդի և նյութատեխնիկական մատակարարման մարզային ծառայության փոխարեն ստեղծվել են առևտրի և սննդի ծառայություն և նյութատեխնիկական մատակարարման ծառայություն: Նորաստեղծ ծառայությունների կանոնադրությունները ներկայացվել են ՀՀ ՏԿԱԻ նախարարի համաձայնեցմանը, իսկ պլանները գտնվում են մշակման փուլում : 1)դ. մարզի բնակչության տարահանման պլանների առկայությունը. Մարզի բնակչության տարահանման ճշգրտված պլանը առկա է: 1)ե. մարզի բնակչության պատսպարման պլանների առկայությունը Մարզի բնակչության պատսպարման ճշգրտված պլանը առկա է:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԻ ԵՎ ՀԳՄ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ն.ՍԻՄՈՆՅԱՆ

24.12.2015թ.